ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ **«ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ» (1 դրույք), «ԱՆԳԼԵՐԵՆ» (2 ԴՐՈՒՅՔ)**, **«ՍԵՐՎԻՍ» (2 ԴՐՈՒՅՔ)** առարկաներ և մասնագիտական մոդուլներ դասավանդող մանկավարժական աշխատողների թափուր աշխատատեղերը համալրելու նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել՝

Ա. հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան) կամ բարձրագույն կրթությամբ և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ ունեցող անձինք:

Բ. մասնագիտական մոդուլների դեպքում՝ այն անձինք, ովքեր ունեն մոդուլի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ մուդուլի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը Հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմս, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է քոլեջի կադրերի բաժին ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 13 -ը ներառյալ, երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 10:00- 16:00-ը:
Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին՝ ժամը 11:00-ին, Երևանի հայ-հունական պետական քոլեջում:

📍 Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 40
☎ Տեղեկությունների համար զարգահարել (010) 44 14 03 հեռախոսահամարով: